

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ԱՆ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿ



Չ Ա Փ Ո Ր Ո Շ Ի Չ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԻ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԱՍԻՆ

Երևան 2009թ.

Մույն չափորոշի մշակմանը մասնակցել և աջակցել են.

ՀՀ ԱՆ բժշկական գնության կազմակերպման վարչության պետ, Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ղեկավար

Վ. Պողոսյան

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ տնօրեն

Ա. Թադևոսյան

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ ֆիզիոտերապիստ

Գ. Տատուրյան

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ ֆիզիոտերապիստ

Լ. Մարկոսյան

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ վիճակագիր

Ն. Մեժլումյան

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ համաճարակաբան

Ն. Հովհաննիսյան

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ դեղագետ

Լ. Սարատիկյան

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ լաբորատոր մասնագետ

Հ. Մարգարյան

“Բժիշկներ առանց սահմանների” /ԲԱՍ/ Ֆրանսիա միջազգային բժշկական մարդասիրական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ

Տպագրությունն իրականացվել է «Գլազո» ՍՊԸ-ի կողմից՝ «ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի, Տուբերկուլոզի և Մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի» միջոցներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Ընդհանուր դրույթներ

II. Առաջնային բուժօգնության մակարդակում երեխաների և մեծահասակ բնակչության հակատուբերկուլոզային ամբուլատոր բուժօգնության կազմակերպում

III. Տուբերկուլոզով հիվանդների դինամիկ դիսպանսերային (շարունակական) հսկողության կազմակերպում

IV. Երեխաների և մեծահասակ բնակչության հակատուբերկուլոզային հիվանդանոցային բուժօգնության կազմակերպում

V. Դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների ամբուլատոր և հիվանդանոցային բուժման կազմակերպում

VI. Հիվանդների հաշվառում և տեղեկատվության փոխանակում

VII. Տուբերկուլոզով հիվանդների առողջարանային - վերականգնողական բուժման կազմակերպում

VIII. Տուբերկուլոզի վաղ հայտնաբերման և կանխարգելման միջոցառումների կազմակերպում

IX. Տուբերկուլոզով հիվանդներին անվճար դեղորայքով ապահովման կազմակերպում

X. Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների կազմակերպում

XI. Ախտաբանաանատոմիական հետազոտությունների կազմակերպում

XII. Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ ՊՈԱԿ-ի կառավարում, ղեկավարում, համակարգում

XIII. Տուբերկուլոզային ծառայության ֆինանսավորում

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Կրճատումների ցանկ

ՀՀԱՆ Հայաստանի հանրապետության առողջապահության նախարարություն

ՀՀԱՆ ՏԱԾ Հայաստանի հանրապետության առողջապահության նախարարության

Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագիր

ՏԱԳ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ

ԱՀԿ Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

ՔՀՏԳ Քաղաքային հակատուբերկուլոզային դիսպանսեր

ՀՀՏԳ Հայաստանի հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր

ՏԲ Տուբերկուլոզ

ԴՈՏ /DOT/ Ուղղակիորեն հսկվող կարճաժամկետ բուժում

ԴՈՏՍ /DOTS/ Ուղղակիորեն հսկվող կարճաժամկետ բուժման ռազմավարություն

ՄԻԱՎ Մարդու իմունային անբավարարության վիրուս

ՁԻԱՀ Ձեռք բերովի իմունային անբավարարության համախտանիշ

ՔԿՎ Քրեակատարողական վարչություն

ԲՆԱ Բժշկական նշանակության այլ ապրանքներ

ՉԱՓՈՐՈՇԻՉ
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՈՒԲԵՐԿՈՒՄ ԴԵՄ
ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

I. Ընդհանուր դրույթներ

Սույնով սահմանվում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում տուբերկուլոզի դեմ պայքարի կազմակերպման չափորոշիչը:

Հակատուբերկուլոզային ծառայությունն անվճար է բնակչության բոլոր խմբերի համար, ծառայության բոլոր մակարդակներում՝ առողջության առաջնային պահպանում և մասնագիտացված բուժօգնություն ու ծառայություններ իրականացնող բոլոր բժշկական կազմակերպությունների (պոլիկլինիկաների տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների, մասնագիտացված հիվանդանոցային բաժանմունքների և մարզային հիվանդանոցների տուբերկուլոզային բաժանմունքների) միջոցով:

II. Առաջնային բուժօգնության մակարդակում երեխաների և մեծահասակ բնակչության հակատուբերկուլոզային ամբուլատոր բուժօգնության կազմակերպում

1. Բնակչության հակատուբերկուլոզային առաջնային ամբուլատոր բուժօգնությունն իրականացվում է հանրապետության պոլիկլինիկաներում՝ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի տարածաշրջանային պոլիկլինիկաների տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների կողմից:

Տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետները գործում են այն բժշկական հաստատություններում, որոնք ունեն լիցենզիա՝ տվյալ գործունեության իրականացման համար:

Առաջնային օղակի մասնագետները տուբերկուլոզի կասկածով հիվանդներին, ախտորոշման նպատակով, ուղեգրում են բացառապես տվյալ տարածքը սպասարկող ՏԲ դեմ պայքարի կաբինետ՝ ըստ հավելված 1-ի ուղեգրի:

ՏԲ դեմ պայքարի կաբինետի համար սույն չափորոշիչով նախատեսված գործառույթների կազմակերպման և անխափան իրականացման պատասխանատուն տվյալ բուժհաստատության տնօրենն է:

2. Պոլիկլինիկաների տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներում աշխատում են բժիշկ-ֆթիզիատորներ, թոքաբաններ, կամ թերապևտներ, որոնք անցել են անհրաժեշտ վերապատրաստման դասընթացներ՝ ԱՀԿ ԴՌՏՍ ռազմավարությամբ և ունեն համապատասխան վկայական:

Տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետի բուժքույրը ՏԲ կաբինետի կողմից հաշվառված հիվանդների բուժման սխեմաների խախտումները հնարավորինս բացառելու և բուժումը ուղղակիորեն հսկման տակ /DOT/ իրականացնելու նպատակով՝ այցելում է նշանակված օրը կաբինետ չներկայացած հիվանդների բնակության վայր, պարզում չներկայանալու պատճառը, կազմակերպում իր ներկայությամբ դեղորայքի ընդունումը, վարում բացատրական գրույց՝ բուժման սխեման խստագույնս պահպանելու անհրաժեշտության վերաբերյալ: Հիվանդի բնակավայր յուրաքանչյուր այցելության ժամանակ՝ տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետի կողմից լրացվում է տուբերկուլոզով հիվանդի դեղորայքի ընդունման ուղղակիորեն հսկման տնային այցելության թերթիկ /հավելված 2/:

2.1 Գյուղական ամբուլատորիաներում /ԳԲԱ/ և Բուժակ-մանկաբարձական կետերում /ԲՄԿ/ տուբերկուլոզով հիվանդների բուժման ամբուլատոր փուլի ուղղակիորեն հսկման կազմակերպման և ապահովման պատասխանատու են համարվում ամբուլատորիաների տնօրենները, հիվանդի կողմից դեղորայքի ընդունման ուղղակիորեն հսկումն իրականացնում են ԳԲԱ-ների և ԲՄԿ-ների բուժքույրերը:

Տարածքային ՏԲ կաբինետից ստացված տեղեկատվության համաձայն՝ ԳԲԱ-ների տնօրենները ներկայանում են ՏԲ կաբինետ, ներկայացնելով հիվանդի ամբուլատոր քարտը /տեղեկատվությունը ստանալուց հետո ոչ ուշ, քան 2 օրվա ընթացքում/, ֆթիզիատորից ստանում իրենց սպասարկման տարածքի ՏԲ հիվանդների վերաբերյալ տեղեկատվությունը: ՏԲ կաբինետի Ֆթիզիատորի կողմից տրամադրվում է հիվանդի անհատական վարման ամսեկան թերթիկները /հավելված 3/, բուժման հակատուբերկուլոզային դեղամիջոցների հստակ նշանակումները և սխեմաները՝ լրացվում են հիվանդի ամբուլատոր քարտում, տրամադրվում է համապատասխան հակատուբերկուլոզային դեղորայքը /հավելված 4/ և տնային այցերի համար նախատեսված այցելության թերթիկները /հավելված 2/: Այն դեպքում, երբ տուբերկուլոզով հիվանդը հրաժարվում է հակատուբերկուլոզային դեղերի ընդունումը ուղղակիորեն հսկման տակ /DOT/

Գյուղական ամբուլատորիայում /ԳԲԱ/ կամ Բուժակ-մանկաբարձական կետում /ԲՄԿ/ կազմակերպելուց, նա պարտավորվում է կանոնավոր կերպով հաճախել տարածքային ՏԲ կաբինետ և այնտեղ դեղորայքն ընդունել ուղղակիորեն հսկման տակ /DOT/: Այս փաստը ամրագրվում է հիվանդի ամբուլատոր քարտում և հաստատվում է հիվանդի ստորագրությամբ:

2.2 ՏԲ կաբինետի կողմից հաշվառված հիվանդների բուժման սխեմաների խախտումները հնարավորինս բացառելու և բուժումը ուղղակիորեն հսկման տակ /DOT/ իրականացնելու նպատակով` Գյուղական բժշկական ամբուլատորիա /ԳԲԱ/ և Բուժակ-մանկաբարձական կետերի /ԲՄԿ/ բուժքույրը այցելում է նշանակված օրը ԳԲԱ և Բուժակ-մանկաբարձական կետ չներկայացած հիվանդների բնակության վայր, պարզում չներկայանալու պատճառը, կազմակերպում իր ներկայությամբ դեղորայքի ընդունումը, վարում բացատրական գրույց` բուժման սխեման խստագույնս պահպանելու անհրաժեշտության վերաբերյալ: Հիվանդի բնակավայր յուրաքանչյուր այցելության ժամանակ` բուժքրոջ կողմից լրացվում է տուբերկուլոզով հիվանդի դեղորայքի ընդունման ուղղակիորեն հսկման տնային այցելության թերթիկ /հավելված 2/:

Ֆթիզիատորի կողմից, յուրաքանչյուր ամբուլատորիայի համար, հստակ սահմանվում է դեղորայքի ամսեկան հաշվետվության /հավելված 5/, ինչպես նաև այցելության և վարման թերթիկների ներկայացման և նոր դեղամիջոցների ստացման օրացուցային օր:

2.3 Բուժման ուղղակիորեն հսկում /DOT/ իրականացնող բոլոր կաբինետները պետք է ապահովված լինեն միանգամյա օգտագործման բաժակներով, տարանջատված, սովորական և բժշկական թափոնների համար նախատեսված, աղբամաններով:

2.4 ԳԲԱ-ի մասնագետները հիվանդների մոտ հակատուբերկուլոզային դեղամիջոցներից առաջացած որևէ կողմնակի երևույթ նկատելիս անմիջապես արձանագրում են վարման թերթիկում և տեղյակ պահում ՏԲ կաբինետի ֆթիզիատորին:

2.5 **Տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների, Գյուղական ամբուլատորիաների /ԳԲԱ/ և Բուժակ-մանկաբարձական կետերի /ԲՄԿ/ կողմից տնային այցելությունների միջոցով տուբերկուլոզով հիվանդների բուժումը ուղղակիորեն հսկման տակ /DOT/ իրականացնելու նպատակով կազմակերպվող այցելությունների վարձատրությունը ներառված է բուժքույրերի ամսեկան հաշվարկված աշխատավարձում` համաձայն ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների բուժանձնակազմերի վարձատրման կարգի:**

2.6 ՏԲ կաբինետի կողմից հաշվառված հիվանդների բուժման ընդհատումները նվազեցնելու, բուժումը ուղղակիորեն հսկման տակ /DOT/ իրականացնելու, հիվանդների Տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներ կանոնավոր այցելը խրախուսելու նպատակով, «Տուբերկուլոզի, Մալարիայի և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի դեմ պայքարի գործալ հիմնադրամի» ֆինանսական աջակցությամբ, Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կազմակերպվում է տուբերկուլոզով հիվանդների սոցիալական աջակցություն` սննդային և հիգիենիկ փաթեթների տեսքով:

Մինչև տվյալ ամսվա 5-ը Ֆթիզիատորի կողմից կազմվում և բուժհաստատության տնօրենի հաստատմանն է ներկայացվում նախորդ ամսվա ընթացքում ուղղակիորեն հսկման տակ հակատուբերկուլոզային դեղորայքը կանոնավոր ընդունած /DOT/ և անհրաժեշտ հետազոտություններն անցած հիվանդների անվանացանկը: Հաստատված անվանացանկերը, տրամադրվում են տուբերկուլոզի դեմ պայքարի ծրագրի մարզային համակարգողին, որը մինչև տվյալ ամսվա 10-ը, ուղղորդող գրությամբ Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ է ներկայացնում մարզում, ըստ բուժհաստատությունների, սոցաջակցության տրամադրման ենթակա անձանց անվանացանկերը:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, ըստ ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»-ի կողմից ներկայացված սոցաջակցության տրամադրման ենթակա անձանց թվաքանակների, կազմակերպում է պահանջվող քանակի սննդի և հիգիենիկ փաթեթների տրամադրումը:

Մարզերի ՏԱԾ համակարգողները կազմակերպում են Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից պահեստավորած սննդի և հիգիենիկ փաթեթների տեղափոխումը մարզ և բաշխումը ըստ բուժհաստատությունների: Բուժհաստատության տնօրենը կրում է անմիջական պատասխանատվություն սննդի և հիգիենիկ փաթեթների ստացման, պահպանման և ՏԲ կաբինետների միջոցով, հիվանդներին բաշխման հարցում:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը կազմակերպում է իրականացված ծրագրի մոնիտորինգ և արդյունքների մասին տեղեկատվությունը ներկայացնում Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ:

3. Երևան քաղաքում տարածքային պոլիկլինիկաներում գործում են տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներ, որոնք ունեն համապատասխան լիցենզավորում: Այն տարածքներում, որոնց պոլիկլինիկաներում նախատեսված չեն ՏԲ կաբինետները, ազգաբնակչության հակատուբերկուլոզային

սպասարկումն իրականացվում է տարածքի մեկ այլ պոլիլիմիկայի համապատասխան կաբինետի կողմից, ըստ Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կցումների /հավելված 6/:

4. Տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետը համարվում է տվյալ տարածքի ամբուլատոր-պոլիլիմիկական սպասարկման ծառայության տուբերկուլոզի դեմ պայքարի հիմնական պատասխանատու կառույցը: Դրա հիմնական գործառնություններն են՝

4.1. մասնակցություն տուբերկուլոզի կանխարգելման գործընթացին՝ տարածքի ազգաբնակչության շրջանում (ըստ հավելված 7-ի),

4.2. տուբերկուլոզի վաղ հայտնաբերում ընդհանուր բուժցանցից ուղեգրված տուբերկուլոզի կասկածով անձանց մոտ

4.3. հայտնաբերված առաջնակի և կրկնակի տուբերկուլոզով հիվանդների հաշվառում (ըստ սույն չափորոշչի գլուխ 6-րդի),

4.4. «տուբերկուլոզ» ախտորոշմամբ հաշվառված առաջնակի և կրկնակի հիվանդների անհրաժեշտ լաբորատոր-գործիքային հետազոտությունների կազմակերպում և բուժման իրականացում՝ բացառապես «Դ-ՌՏՍ» ռազմավարությամբ (ըստ հավելված 8-ի),

4.5. տուբերկուլոզի հաստատման և բժշկական ցուցումների առկայության դեպքում (ըստ հավելված 9-ի), մասնագիտացված բուժօգնության կազմակերպման նպատակով, տուբերկուլոզով հիվանդների ուղեգրում մասնագիտացված տուբերկուլոզային ստացիոնար բուժօգնություն իրականացնող բուժհաստատություն (ըստ հավելված 10-ի ուղեգրի ձևի) հետևյալ կարգով՝

- Բացիլազատող առաջնակի հիվանդներին, բոլոր լաբորատոր-գործիքային հետազոտությունները իրականացնելուց հետո, ուղեգրում են (ըստ հավելված 10-ի) մասնագիտացված տուբերկուլոզային ստացիոնար բուժօգնություն իրականացնող բուժհաստատություն՝ հիվանդանոցային պայմաններում բուժման ինտենսիվ փուլը կազմակերպելու համար;

- Բացիլազատող կրկնակի հիվանդներին, բոլոր լաբորատոր-գործիքային հետազոտությունները իրականացնելուց հետո ուղեգրում են (ըստ հավելված 10-ի) մասնագիտացված տուբերկուլոզային ստացիոնար բուժօգնություն իրականացնող բուժհաստատություն՝ հիվանդանոցային պայմաններում բուժման ինտենսիվ փուլը կազմակերպելու համար;

- Ոչ բացիլազատող առաջնակի հիվանդների բուժումը կազմակերպվում է ամբուլատոր պայմաններում, բացառապես «Դ-ՌՏՍ» ծրագրով, բացառությամբ հավելված 9-ում նշված դեպքերի, որոնց բուժման ինտենսիվ փուլը կազմակերպվում է հիվանդանոցային պայմաններում;

- Ոչ բացիլազատող կրկնակի հիվանդների բուժումը կազմակերպվում է ամբուլատոր պայմաններում, բացառապես «Դ-ՌՏՍ» ծրագրով, բացառությամբ հավելված 9-ում նշված դեպքերի, որոնց բուժման ինտենսիվ փուլը կազմակերպվում է հիվանդանոցային պայմաններում;

- Բուժման ինտենսիվ փուլն ավարտած առաջնակի և կրկնակի հիվանդների բուժման պահպանողական փուլը կազմակերպվում է տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետի կողմից:

4.6. Ըստ «Դ-ՌՏՍ» ռազմավարության, բուժումն ավարտած առաջնակի և կրկնակի հիվանդների դինամիկ դիսպանսերային / շարունակական / հսկողության կազմակերպում, համաձայն սույն չափորոշչի III գլխի (տուբերկուլոզով հիվանդների դինամիկ դիսպանսերային / շարունակական / հսկողության կազմակերպում):

4.7. առողջարանային բուժման ուղեգրման կազմակերպում՝ համաձայն սույն չափորոշչի VII գլխի («Պետական պատվերի շրջանակներում տուբերկուլոզով հիվանդների առողջարանային վերականգնողական բուժման կազմակերպում»):

4.8. Ըստ «Դ-ՌՏՍ» ռազմավարության անվճար դեղորայքի տրամադրում՝ համաձայն սույն չափորոշչի VII գլխի («Պետական պատվերի շրջանակներում տուբերկուլոզով հիվանդներին անվճար դեղորայքով ապահովման կազմակերպում»):

4.9. Հիվանդների անհրաժեշտ լաբորատոր-գործիքային հետազոտությունների կազմակերպում տարածքային պոլիլիմիկայում: Ախտորոշման ճշտման նպատակով կարող են կազմակերպել լաբորատոր-գործիքային հետազոտություններ՝ ուղեգրելով (ըստ հավելված 1-ի ուղեգրի ձևի) չձ մարզերի այն հիվանդանոցային բուժհաստատություններ, որոնց կազմում կան տուբերկուլոզային բաժանմունքներ, կամ անհրաժեշտության դեպքում ք.Աբովյանի չձՏԳ:

Երևան քաղաքում լաբորատոր-գործիքային հետազոտությունները կազմակերպվում են տարածքային պոլիլիմիկաներում, անհրաժեշտության դեպքում ախտորոշումը ճշտելու, նեղ

մասնագիտական խորհրդատվությունն իրականացնելու նպատակով հիվանդները կարող են ուղեգրվել (ըստ հավելված 1-ի ուղեգրի ձևի) Երևան քաղաքի հակատուբերկուլոզային դիսպանսեր կամ ՀՀՏԳ: ՔՀՏԳ-ում խորհրդատվությունն իրականացվում է երեք նեղ մասնագիտական՝ թոքային, արտաթոքային և մանկական կաթինետների միջոցով: Ուղեգրին կից ներկայացվում են կաթինետում կատարված հետազոտությունների արդյունքները: Անհրաժեշտության դեպքում լաբորատոր-գործիքային հետազոտություններ կարող են կազմակերպվել այլ բուժհաստատություններում՝ պայմանագրային սկզբունքով:

4.10 Դեռահասների կաթինետի հետ համագործակցելով, նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց բժշկական հետազոտությունների կազմակերպում՝ համաձայն 10.07.2008թ. «Նախագորակոչային ու գորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների առողջական վիճակի գնահատման, բժշկական փորձաքննության անցկացման, բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N748-Ն որոշման: Տուբերկուլինային փորձը, որը ներառված է նախագորակոչային և գորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների առողջական վիճակի գնահատման անհրաժեշտ հետազոտությունների ծավալում՝ իրականացվում է առաջնային բուժօղակի տվյալ տարիքի պատանիների բուժասպասարկման համար առանձնացված մասնագետի (դեռահասների բժիշկ) հսկողության ներքո: Փորձը կազմակերպվում է բուժհաստատության կանխարգելիչ պատվաստումների սենյակում, այն իրականացնում է հատուկ վերապատրաստված, գործառույթը կատարելու թույլտվություն ունեցող անձը: Տուբերկուլինային փորձի արդյունքը գնահատվում է նշված բժշկի կողմից և դրական ռեակցիայի դեպքում ներկայացվում է տվյալ հաստատության տուբերկուլոզի դեմ պայքարի կաթինետի մասնագետին՝ լրացուցիչ հետազոտությունների կազմակերպման համար:

4.11 Ազատագրկման վայրերից ազատված տուբերկուլոզով հիվանդների բուժման շարունակության կազմակերպում՝

Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակից (համաձայն ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից ստացված տեղեկատվության) նախապես՝ 15 օր առաջ, ստանալով կալանքից ազատվող տուբերկուլոզով հիվանդի վերաբերյալ տեղեկատվություն (հավելված 11) ճշտել նշված հասցեի իսկությունը և տեղեկացնել «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»: Հիվանդի ազատմանը հաջորդող առավելագույնը 3 օրերի ընթացքում ՔԿՎ ուղարկում է կալանքից ազատված հիվանդի մասին տեղեկությունները (ՏԲ 09 և ՏԲ 01-ի և էպիկրիզի պատճեն) փոստով կամ այդ գործառույթը իրականացնող նշանակված անձի միջոցով Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ: Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակը ապահովում է տեղեկատվության տրամադրումը ՏԲ ի դեմ պայքարի կաթինետ: Տարածքային հակատուբերկուլոզային կաթինետը 7 օրվա ընթացքում ապահովում է հիվանդի հաշվառումը և բուժման շարունակությունը և տեղեկացնում այդ մասին գրասենյակ:

Բուժման արդյունքի վերաբերյալ տեղեկությունը տրամադրում է ՔԿՎ-ին՝ գրասենյակի կողմից :

Տուբերկուլոզով հիվանդի կալանավորման դեպքում ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության հարցմանն ի պատասխան հիվանդի վերաբերյալ տեղեկությունները (ՏԲ 09 և ՏԲ 01-ի և էպիկրիզի պատճեն) տրամադրվում են «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»ի կողմից:

4.12 Ժամանակավոր անաշխատունակության և բժշկասոցիալական փորձաքննությունների անցկացումը ըստ «Պետական պատվերի շրջանակներում առաջնային բուժօգնության տրամադրման մասին» չափորոշի:

4.13 Տուբերկուլոզով հիվանդները ենթարկվում են ՄԻԱՎ վարակակրության հետազոտման՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված բուժկանխարգելիչ հաստատություններում ՄԻԱՎ-ի նկատմամբ կամավոր խորհրդատվության և հետազոտման կազմակերպման և իրականացման կարգի: Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո ՏԲ կաթինետի կողմից տեղեկատվություն է ներկայացվում ՏԱԳ՝ ՄԻԱՎ թեստավորում անցած տուբերկուլոզով հիվանդների քանակի վերաբերյալ:

5. Տուբերկուլոզի դեմ պայքարի գործընթացը գյուղական բժշկական ամբուլատորիաներում, առողջության կենտրոններում, ընտանեկան բժշկի գրասենյակներում և բուժակ-մանկաբարձական կետերում իրականացվում է առաջնային օղակի բոլոր մասնագետների (տեղամասային թերապևտ, տեղամասային մանկաբույժ, ընտանեկան բժիշկ, բուժակ մանկաբարձական կետի բուժքույր) կողմից, որոնք իրենց լիազորությունների շրջանակներում, կրում են պատասխանատվություն՝ իրենց կողմից սպասարկվող բնակչության շրջանում տուբերկուլոզի դեմ պայքարի խնդրում:

6. Տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետը կրում է **«թորային հիվանդությունների հայտնաբերման կաբինետ» անվանումով ցուցանակ:**

III. Տուբերկուլոզով հիվանդների դինամիկ դիսպանսերային (շարունակական) հսկողության կազմակերպում

1. Տուբերկուլոզով հիվանդների բուժման դինամիկ /դիսպանսերային/ շարունակական հսկողությունը /լաբորատոր-գործիքային հետազոտություններ և մասնագիտական խորհրդատվություն/ բուժման ավարտից հետո կազմակերպվում է պոլիկլինիկաների տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների միջոցով՝ համաձայն սույն չափորոշի հավելված 12-ի: Բոլոր լաբորատոր-գործիքային հետազոտություններն ու մասնագիտական խորհրդատվությունն իրականացվում են միայն պոլիկլինիկաների տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների ուղեգրմամբ:

Անհրաժեշտության դեպքում լաբորատոր-գործիքային հետազոտություններ կարող են կազմակերպվել այլ բուժաստատություններում՝ պայմանագրային սկզբունքով:

2. **Տուբերկուլոզով հիվանդների շարունակական դիսպանսերային հսկողության կազմակերպումն իրականացվում է հետևյալ սկզբունքով.** (ըստ հավելված 13 –ի)

Թորային տուբերկուլոզի դեպքում՝

- քսուք-բացասական հիվանդների շարունակական հսկողությունը սահմանվում է բուժման ավարտից հետո ևս 6 ամիս, կատարելով անհրաժեշտ հետազոտություններ /ֆիզիկալ, խորխի մանրադիտակային, արյան ընդհանուր, հարկ եղած դեպքում նաև՝ ռենտգեն հետազոտություն/հսկման ավարտին,
- քսուք-դրական հիվանդների հսկողությունը սահմանվում է՝
 - առաջին կատեգորիայով բուժման ավարտից հետո ա/ բացիլարտադրությունը դադարելուց հետո ևս 1 տարի;
բ/բացիլարտադրությունը շարունակվելու դեպքում /5-6-րդ ամիսներին՝ քսուք դրական/ կրկնակի բուժում 2-րդ կատեգորիայով
 - 2-րդ կատեգորիայով բուժման ավարտից հետո, ա/ բացիլարտադրությունը դադարելու դեպքում՝ ևս 1 տարի,
բ/ բացիլարտադրությունը շարունակվելու դեպքում՝ անժամկետ

Վերը նշված բոլոր դեպքերում կատարվում են անհրաժեշտ հետազոտություններ /ֆիզիկալ, խորխի մանրադիտակային, արյան ընդհանուր, հարկ եղած դեպքում նաև՝ ռենտգեն հետազոտություն/ 6 ամիսը մեկ անգամ:

Արտաթորային տուբերկուլոզ

- մնացորդային երևույթների բացակայության դեպքում հսկողություն սահմանվում է ևս 6 ամիս,
- մեծ մնացորդային երևույթների /տուբերկուլոզային մենինգոէնցեֆալիտ, ողնաշարի տուբերկուլոզ և այլ/ առկայության դեպքում հսկողություն սահմանվում է 2 տարի:

IV. Երեխաների և մեծահասակ բնակչության տուբերկուլոզային հիվանդանոցային բուժօգնության կազմակերպում

1. «Տուբերկուլոզ» ախտորոշմամբ հիվանդների հիվանդանոցային բուժումն իրականացվում է բնակչության բոլոր խավերի համար անվճար՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից, համաձայն ՀՀ առողջապահության նախարարության «Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների չափորոշիչի » 2008թ.-ի դեկտեմբերի 10-ի N1806-Ա հրամանով հաստատված հիվանդությունների ցանկի:

2. Տուբերկուլոզ ախտորոշմամբ հիվանդների հիվանդանոցային բուժօգնությունն ընդգրկում է բոլոր բացիլազատող, ինչպես նաև հավելված 9-ում նշված հիվանդների բուժման կազմակերպումը՝ «ՀՀՏԳ» ՓԲԸ-ում, Երևանի ՔՀՏԳ-ում և հանրապետության բուժհաստատությունների տուբերկուլոզային ստացիոնար բաժանմունքներում: Տուբերկուլոզով հիվանդները հոսպիտալացվում են բացառապես տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների ուղեգրմամբ:

- Տուբերկուլոզով հիվանդների հիվանդանոցային բուժօգնությունն իր մեջ ընդգրկում է արդյունավետ բուժման համար անհրաժեշտ միջոցների ամբողջ ծավալը /հիվանդասենյակով ապահովումը, մասնագիտացված կոնսուլտացիաները, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների անցկացումը, վիրահատական և ֆիզսոդ միջոցների, բուժական միջամտությունները, անհրաժեշտ դեղերով ապահովումը, թթվածնի և այլ գազերի օգտագործումը,

հիվանդի խնամքի ապահովումը միջին և կրտսեր բուժանձնակազմի կողմից, այլ անհրաժեշտ բժշկական, հարբժշկական ծառայությունները և սննդով ապահովումը/ Հիվանդանոցային բուժումն ընդգրկում է միայն բուժման ինտենսիվ փուլը (առաջնակի հիվանդների համար 60 օր, բացիլազատումը չդադարելու դեպքում ևս 30 օր, կրկնակի հիվանդների համար 90 օր, բացիլազատումը չդադարելու դեպքում ևս 30 օր), որի փոխհատուցումն իրականացվում է համաձայն ՀՀ ԱՆ հրամանով հաստատած բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման նորմատիվների և միջինացված գների:

3. Տուբերկուլոզով հիվանդների բուժումն իրականացվում է համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի և դրա իրականացման ժամանակացույցի» միայն ԱՀԿ «ԴՌՏՍ» ռազմավարության պահանջներին համապատասխան (ըստ հավելված 8-ի) :

- տուբերկուլոզով տառապող հոգեկան հիվանդների բուժման ամբողջ կուրսը /6--8 ամիս/ կազմակերպվում է ՀՀՏԳ-ի համապատասխան բաժանմունքում.
- կրկնակի հետազոտություններից խուսափելու համար, ախտորոշման հաստատման նպատակով տուբերկուլոզով հիվանդների հետազոտումը (հատկապես ռենտգեն-ֆլյուորոգրաֆիկ) հիվանդանոցային պայմաններում կազմակերպելիս որպես հիմք ընդունվում են տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների հետազոտությունների տվյալները;
- հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններն իրականացվում են բուժհաստատության տնօրենի կողմից հաստատված ուղեգրով ըստ հավելված 14-ի` տվյալ հետազոտություններն իրականացնող լիցենզավորված բուժհիմնարկներում համաձայն 10.12.2008 թվականի N1810-Ա ՀՀ ԱՆ «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման մասին» չափորոշչի «Հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների» կարգի, միայն ախտորոշման ճշտման նպատակով և եթե կատարված են ԴՌՏՍ-ով նախատեսված բոլոր լաբորատոր-գործիքային (խորխի, ռենտգեն-ֆլյուորոգրաֆիկ) հետազոտությունները ;
- հիվանդների հոսպիտալացումն իրականացվում է **բացառապես** տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների ուղեգրմամբ` բացառությամբ շտապ օգնության ծառայության միջոցով տեղափոխված հիվանդների և ինքնուրույն դիմած ՏԲ հիվանդների, որոնց հոսպիտալացումը հիմնավորվում է, որպես անհետաձգելի բժշկական միջամտություն պահանջող խիստ անհրաժեշտություն: Առանց ՏԲ կաբինետի ուղեգրի հիվանդի հոսպիտալացման դեպքում, տուբերկուլոզային ախտորոշումը հաստատվելուց անմիջապես հետո, բուժհաստատությունը տեղեկատվություն է ներկայացնում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ին /ըստ հավելված 15-ի/:
- երբ տարածքային պոլիկլինիկայի տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետի կողմից ուղեգրված հիվանդն ընդունվում է տուբերկուլոզային ստացիոնար կամ բաժանմունք չճշտված ախտորոշմամբ, տուբերկուլոզի հաստատման դեպքում, անմիջապես տեղյակ է պահվում հիվանդի բնակավայրի պոլիկլինիկայի տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետին և ՊՀՀ Տեսչության տարածքային կենտրոն;
- եթե հիվանդն ընդունվել է տուբերկուլոզային ստացիոնար կամ բաժանմունք չճշտված ախտորոշմամբ տուբերկուլոզի կասկածով, ստանում է ոչ սպեցիֆիկ բուժում և դուրս գրվելիս տուբերկուլոզի ախտորոշումը չի հաստատվում, հիվանդի հետ կապված ծախսերը հատուցվում են տուբերկուլոզի ախտորոշման նպատակով նախատեսվող հիվանդանոցային պայմաններում հետազոտման համար սահմանված գումարի չափով;
- հիվանդանոցային բուժում ստացող հիվանդները ստացիոնար ընդունվելուց իրազեկվում են անվճար բուժօգնության իրենց իրավունքների, բուժման տևողության, ընթացքի, հնարավոր կողմնակի ազդեցությունների, սպասվող արդյունքների և անհրաժեշտ հետևողականության վերաբերյալ : Կնքվում է **համաձայնագիր** / հավելված 28 /, որը պարտադիր կցվում է հիվանդի հիվանդության պատմությանը ;
- հիվանդների անընդմեջ բուժումն ապահովելու նպատակով, հիվանդանոցային փուլի ավարտից հետո հիվանդին դուրս գրելիս, անհապաղ տեղեկացվում է հիվանդի բնակավայրի տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ, միևնույն ժամանակ ուղարկվում է հիվանդի էպիկրիզը և բուժման անհատական քարտը /ձև` ՏԲ 01/: Յուրաքանչյուր եռամսյակից հետո ըստ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակի» կողմից սահմանված ժամանակացույցի բոլոր հիվանդանոցային հակատուբերկուլոզային բուժօգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունները հաշվետվություն են ներկայացնում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» բուժված հիվանդների վերաբերյալ ըստ հավելված 16-ի ;

- հիվանդության արդյունավետ բուժման և բարդությունների կանխարգելման նպատակով՝ հիվանդների հետ պարբերաբար վարվում են զրույցներ, բացատրելով, որ տուբերկուլոզը բուժելի հիվանդություն է և դրա հիմնական նախապայմանն է՝ լսել և կատարել մասնագետի բոլոր խորհուրդները, դեղամիջոցներն ընդունել անընդմեջ ու նշանակված սխեմայով, պահանջվող տևողությամբ, ինչպես նաև թույլ չտալ ռեժիմի խախտումներ,
- Տուբերկուլոզով հիվանդները ենթարկվում են ՄԻԱՎ վարակակրության հետազոտման՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված բուժկանխարգելիչ հաստատություններում ՄԻԱՎ-ի նկատմամբ կամավոր խորհրդատվության և հետազոտման կազմակերպման և իրականացման կարգի: Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո բուժհաստատության կողմից տեղեկատվություն է ներկայացվում ՏԱԳ՝ ՄԻԱՎ թեսթավորում անցած տուբերկուլոզով հիվանդների քանակի վերաբերյալ:

V. Գեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների ամբուլատոր և հիվանդանոցային բուժման կազմակերպում

Ընդհանուր դրույթներ

1.ԳԿ հիվանդների հայտնաբերումը, ախտորոշումը, բուժումը իրականացնում են ՀՀ ՏԲ հաստատությունների համապատասխան վերապատրաստում անցած՝ ԳԿ ՏԲ-ի ընթացքին և վարմանը /էթիոլոգիա, պաթոգենեզ և վարակի փոխանցում, տուբերկուլոզի տարբեր ձևերի ախտորոշում, դեպքերի համակարգում, դեղամիջոցները և դրանց կողմնակի ազդեցությունները, բուժման ռեժիմ և վերահսկում՝ նոր, կրկնակի բուժում անցնող և գեղորայքակայուն հիվանդների համար, կողմնակի ազդեցությունների կառավարում, ՏԲ-ի կանխարգելում, բուժման արդյունք, ստանդարտ մատյանների և ՏԲ ձևերի օգտագործում, գրանցման և հաշվետվության գաղտնիության պահպանում, թափոնների կառավարում, լուս.աշխատանք և ՏԲ համաճարակաբանություն/ լիարժեք տիրապետող մասնագետներ:

2. Երևան քաղաքում ԳԿ հիվանդների բուժումը կազմակերպվում է «Բժիշկներ առանց սահմանների» /ԲԱՍ/ Ֆրանսիա միջազգային բժշկական մարդասիրական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից, Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության և Երևանի քաղաքապետարանի միջև ամրագրված հուշագրի շրջանակներում՝ Երևանի Մալաթիա-Սեբաստիա /թիվ 19 պոլիկլինիկա/, Շենգավիթ /Սուրբ Աստվածամայր ԲԿ-ի 18 պոլիկլինիկա/, Ավան /թիվ 12 պոլիկլինիկա/, Նոր Նորք /Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ-ի պոլիկլինիկա/, Աջափնյակ /«Արմենիա» ԲԿ-ի պոլիկլինիկա/ համայնքներում: Երևան քաղաքի Արաբկիր, Կենտրոն, Դավիթբաշեն, Էրեբունի, Քանաքեռ-Զեյթուն և Նորք-Մարաշ համայնքների տարածքային պոլիկլինիկաների ՏԲ դեմ պայքարի կաբինետների կողմից հայտնաբերված ԳԿ հիվանդների բուժումը կազմակերպվում է ծրագրի շրջանակներում ընդգրված ԳԿ հիվանդների բուժում իրականացնող տարածքային պոլիկլինիկաներում՝ ըստ Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված և «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ի հետ համաձայնեցված ԳԿ հիվանդների բուժման կազմակերպման վերաբերյալ համայնքային կցագրումների:

ԳԿ հիվանդների հիվանդանոցային բուժօգնությունը կազմակերպվում է ՀՀՏԳ-ի գեղորայքակայուն հիվանդների բաժանմունքում : Հիվանդանոցային բուժումը տևում է 90 օր, բացիլազատումը չդադարելու դեպքում մինչև 180 օր:

3.Մասնագիտացված ԲԳԿ ՏԲ կաբինետները յուրաքանչյուր դեպք ներկայացնում են ԳԿ հանձնաժողովի քննարկմանը

3.1 Բժշկական հանձնաժողովի կազմում ընդգրկվում են

ԳԿ ծրագրի ղեկավար

Արտերկրի մասնագետներ

Ֆիզիատորներ

Հոգեբան

Սոցիալական աշխատող

3.2 ԳԿ հանձնաժողովի իրավասության շրջանակներ

1) Հիվանդի ընդգրկում բուժման ծրագրում, բուժման հետագա ընթացքի վերաբերյալ հարցերի քննարկում և որոշումների կայացում

- 2) Ծրագրի ոչ բժշկական հարցերի լուծում՝ սոցիալական աջակցություն, բուժման հետևողականություն
- 3) Բժշկական հանձնաժողովի գործունեությունը կարող է փոփոխության ենթարկվել՝ ելնելով ծրագրի կարիքներից:

4. ԲԴԿ տուրերկուլոզի բուժումը, բուժման ավարտից հետո հսկողությունը իրականացվում է համաձայն «ԴԿ ՏԲ հիվանդների կառավարման ուղեցույցի» /հավելված 31/

5. Ներհիվանդանոցային վարակի կանխարգելումը և վարակի հսկողությունը իրականացվում է համաձայն ՀՀ ԱՆ 20.10.2008 թվականի N21-Ն հրամանով հաստատված «Հայաստանի հանրապետությունում համաճարակաբանական հսկողության ՍԿ 3.1.1-010-08 սանիտարահամաճարակային կանոններ և նորմերի» և «ԴԿ հիվանդների վարման ուղեցույցի »

6. ԲԴԿ հիվանդների գրանցումը և հաշվառումը իրականացվում է համաձայն ԱՀԿ-ի կողմից ընդունված ԴԿ ՏԲ 01, ԴԿ ՏԲ 02, ԴԿ ՏԲ 03, ԴԿ ՏԲ 04, ԴԿ ՏԲ 05, ԴԿ ՏԲ 06, ԴԿ ՏԲ 07, ԴԿ ՏԲ 08, ԴԿ ՏԲ 09 /հավելված 26/,

**Կատեգորիա 4-րդ հիվանդի բուժման քարտ /
/ԴԿ ՏԲ 01/**

Հիվանդը, որը գրանցված է որպես կատեգորիա 4, ստանում է այս կատեգորիայի համար նախատեսված բուժում և ունի համապատասխան քարտ, որը լրացվում է հիվանդին վարող բուժաշխատողի կողմից: Քարտը լրացվում է ամեն օր /անհրաժեշտ է կատարել նշքմաներ քիմիոթերապիայի և ուղղակիորեն հսկման տակ ընդունումից հետո/: Քարտը աղբյուր է հանդիսանում Կատեգորիա 4 հիվանդների համար նախատեսված գրանցամատյանը լրացնելու և պարբերաբար նոր տեղեկատվություն ավելացնելու համար: Հիվանդի տեղափոխման ժամանակ /օր.ստացիոնարից բնակության վայրի ՏԲ կաբինետ տեղափոխվելիս/ բուժման քարտը կամ նրա պատճենն հիվանդի հետ փոխանցվում է այն բուժ հաստատության ը, որտեղ հիվանդը պետք է շարունակի իր բուժումը:

Շրջանում կատեգորիա 4 հիվանդների հաշվառման մատյան/
/ԴԿ ՏԲ 02/

Բոլոր հիվանդները նախ գրանցվում են «Շրջանում ՏԲ հիվանդների ՏԲ 03 հաշվառման մատյանում»: Այնուհետև բազմադեղակայունության դեպքում տեղափոխվում «Շրջանում կատեգորիա 4 հիվանդների հաշվառման մատյան», որտեղ էլ և գրվում է հիվանդների բուժման ելքի արդյունքները: Մոնո կամ պոլի դեղակայունության դեպքում հիվանդները մնում են հաշվառման մեջ ՏԲ 03 մատյանում: «Շրջանում կատեգորիա 4 հիվանդների հաշվառման մատյանում» ողջ տեղեկատվությունը լրացվում է ԴԿ ՏԲ 01 քարտից՝ յուրաքանչյուր նոր տվյալ ի հայտ գալուն զուգահեռ: Այս մատյանի վարման պատասխանատուն գրանցում է հիվանդին այնտեղ՝ վերջինիս մոտ ԲԴԿ ՏԲ ախտորոշելուց անմիջապես հետո:

ԲԴԿ ՏԲ հիվանդի իդենտիֆիկացիոն քարտ /ԲԴԿ ՏԲ 03/

ԲԴԿ Տուրերկուլոզով հիվանդի իդենտիֆիկացիոն քարտը (ճև «ՏԲ 03) լրացվում է հիվանդի մոտ ԴԿ ՏԲ ախտորոշվելուց անմիջապես հետո՝ ՏԲ 01 բուժման քարտի հետ միաժամանակ: ԴԿ ՏԲ 03 քարտը պահվում է հիվանդի մոտ: Քարտում նշվում է հիվանդի վերաբերյալ տվյալներ, իդենտիֆիկացիոն համարը, բուժման մասին տվյալներ /բուժումը սկսելու ամսաթիվը, ալերգիկ և ծանր կողմնակի դեղորայքային ազդեցություն/: Նշվում է նաև այն բուժհաստատության անունը, որտեղից հիվանդը ստանում է դեղամիջոցները և նախատեսված է քարտում նշել հաջորդ նախատեսված այցի ամսաթիվը:

Խորխի հետազոտման ուղեգիր /ԲԴԿ ՏԲ 04/

Լրացվում է հիվանդի խորխը ցանքսի և/կամ դեղազգայունության հետազոտման ողարկելուց: Հետազոտությունների արդյունքները լրացվելուց անմիջապես հետո քարտն ողարկվում է բուժհաստատություն:

ԲԴԿ հիվանդների ցանքսի և դեղազգայունության լաբորատոր հաշվառման մատյան (ԲԴԿ ՏԲ 05, 06)

ԲԳԿ ՏԲ 05-ը լրացնում են խորխի ցանքս իրականացնող բոլոր լաբորատորիաները /ԱՌԼ/: Տվյալները լրացվում են խորխի ցանքսի ուղեգրի գրառումներից և տեղում՝ լաբորատորիայում հետազոտության արդյունքներից:

ԲԳԿ ՏԲ 06 լաբորատոր հաշվառման մատյանում լրացվում է դեղագրայունության արդյունքները /ԱՌԼ-ում/: ՏԲ 05 և 06 մատյանները պարբերաբար համեմատվում է ԲԳԿ տուբերկուլոզի հաշվառման տարածաշրջանային մատյանի հետ /ԲԳԿ ՏԲ 02/ համոզվելու համար, որ ախտորոշված բոլոր դեպքերը գրանցվել են վերջինում:

IV կատեգորիայի հիվանդների հաշվառման եռամսյակային հաշվետվություն
/ԳԿ ՏԲ 07/

Այս հաշվետվական ձևը լրացվում է «Շրջանում կատեգորիա 4 հիվանդների հաշվառման մատյանից»/ԲԳԿ ՏԲ 02/: ԳԿ ՏԲ 07-ը ամբողջապես լրացվում է 1 եռամսյակ ուշացումով, որպեսզի ժամանակ լինի ցանքսի և ԳՋԹ-ի արդյունքները լիարժեք ունենալու համար /օր. Եթե հիվանդը գրանցվել է առաջին եռամսյակում՝ 01.01-31.03, պետք է հաշվառվի հունիսի 1-ից հետո/: Հաշվետվական ձևը ներկայացվում է ՀՀ ԱՆ Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ՝ յուրաքանչյուր եռամսյակ:

6 ամսյա քիմիոթերապիայից հետո նախնական /միջանկյալ/ արդյունքների գնահատում
/ԳԿ ՏԲ 08/

Տվյալ հաշվետվական ձևը լրացվում է «Շրջանում կատեգորիա 4 հիվանդների հաշվառման մատյանից»/ԲԳԿ ՏԲ 02/: Քանի որ բուժման վերջնական արդյունքները լինում են բուժումը սկսելուց 2-3 տարի հետո միայն, ուստի ծրագրի գնահատման համար խիստ կարևոր է յուրաքանչյուր եռամսյակում ունենալ նախնական տվյալներ: Քիմիոթերապիայի նախնական տվյալները նեկայացվում են հիվանդի բուժումը սկսելու եռամսյակի վերջին օրվանից 9 ամիս հետո: Դա թույլ է տալիս հաշվետվության մեջ ներառել տվյալ եռամսյակում գրանցված բոլոր հիվանդների ցանքսի պասսատսխանների վերաբերյալ տեղեկատվությունը՝ բուժումը սկսելուց 6 ամիս հետո /օր. ՏԲ հիվանդը, որը սկսել է բուժումը առաջին եռամսյակում՝ 01.01-31.03, կընդգրկվի հաջորդ տարվա հունվարի 1-ից հետո կազմվող տվյալ հաշվետվական ձևի մեջ/:

Հաշվետվական ձևը ներկայացվում է ՀՀ ԱՆ Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ՝ յուրաքանչյուր եռամսյակ:

IV կատեգորիայի հիվանդների քիմիոթերապիայի արդյունքների տարեկան հաշվետվություն
/ԳԿ ՏԲ 09/

Հաշվետվական այս ձևը լրացվում է 24 և 36 ամիս անց այն պահից, երբ տվյալ եռամսյակի վերջին հիվանդը սկսել է ընդունել քիմիոթերապիա: Հիվանդների մեծ մասը կավարտի դեղամիջոցների ընդունումը 26 ամիս անց, որը թույլ կտա գնահատել բուժման նախնական արդյունքները: Սակայն որոշ հիվանդներ կշարունակեն բուժումը 24 ամսից հետո, այդ է պատճառը, որ հաշվետվական ձևը լրացվում է նաև 36 ամիս անց այն պահից, երբ տվյալ եռամսյակի վերջին հիվանդը սկսել է ընդունել քիմիոթերապիա: 36 ամիս անց արդեն ցուցանիշները տվյալ եռամսյակի համար կլինեն վերջնական:

Այն հիվանդները, որոնք ի սկզբանե ներ են առնվել IV կատեգորիայում, սակայն հետագայում պարզվել է, որ դեղագրայուն են, նորից հետ են գրանցվում « Շրջանում ՏԲ հիվանդների հաշվառման 03 մատյանում» և բուժման արդյունքները վեր են լուծվում այլ կատեգորիաներում:

Հաշվետվական ձևը ներկայացվում է ՀՀ ԱՆ Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ՝ յուրաքանչյուր եռամսյակ:

ԲԳԿ հիվանդների վարման ընթացքը գրանցվում է համաձայն «ԳԿ ՏԲ հիվանդների կառավարման ուղեցույցում» ներկայացված ձևերի,

7. Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների կազմակերպում

Երևան քաղաքում ախտորոշված դեղորայքակայուն հիվանդների խորխի մանրադիտակային հետազոտությունը կատարվում է «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության «Տուբերկուլոզի դեղորայքակայուն ձևերի բացահայտում, ախտորոշում և բուժում » ծրագրի իրականացման տարածքների ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների լաբորատորիաներում՝ հավելված 24, միաժամանակ հանձնված նմուշները ուղարկվում են Ազգային Ռեֆերենս Լաբորատորիա արագ (MGIT) և ստանդարտ եղանակով ցանքսի և ԳՋԹ հետազոտության համար: Նվազագույնը Isonazid-ի կամ Rifampicin-ի նկատմամբ կայունության դեպքում ստուգվում է նմուշի զգայնությունը երկրորդ կարգի դեղերի նկատմամբ և հիվանդն ընդունվում է ԳԿ բաժանմունք: ԱՌԼ-ում անց են կացվում լաբորատոր քննություններ մինչև բուժման ավարտը:

ԲԳԿ հիվանդների համար խորիսի քննությունը և ցանքսը (MGIT և ստանդարտ մեթոդ) իրականացվում են յուրաքանչյուր ամիս, ԳԿ բուժման երկրորդ ամսից հետո, մինչև ինտենսիվ փուլի ավարտը և դրանից հետո՝ շարունակական փուլում երկու ամիսը մեկ անգամ:

Ցանքսի ցանկացած դրական արդյունքի դեպքում անց է կացվում դեղագալստության թեստ առաջին և երկրորդ շաբթի դեղերի նկատմամբ .

Որևէ դեղակալություն ունեցող հիվանդների համար խորիսի քննությունը և ցանքսը (MGIT և ստանդարտ մեթոդ) անց են կացվում բուժման երկրորդ ամսից հետո: Եթե երկրորդ ամսին բացասական է, ցանքսը կրկնվում է յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ, մինչև բուժման ավարտը: ՊԳԿ հիվանդների մոտ անց է կացվում առաջին և երկրորդ շաբթի Գ-ՁԹ, ցանքսի ցանկացած դրական արդյունքի դեպքում:

VI .Հիվանդների հաշվառում և տեղեկատվության փոխանակում

1.Տուբերկուլոզ ախտորոշմամբ յուրաքանչյուր անձ, Երևան քաղաքում և ՀՀ մարզերում, հաշվառվում է ըստ բնակության վայրի տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետում, և նրա տվյալները գրանցվում են ՏԲ 03 Հաշվառման մատյանում, որի հիման վրա կազմվում են եռամսյակային ՏԲ դեպքերի վերաբերյալ ՏԲ 07, Բուժման արդյունքների վերաբերյալ ՏԲ 08, և խորիսի մանրէազերծման վերաբերյալ ՏԲ 10 հաշվետվական ձևերը և ներկայացվում ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ըստ հաստատված ժամանակացույցի:

Բազմադեղակալություն հիվանդների հաշվառման և տեղեկատվության փոխանակման գործընթացը նակարագրված է սույն չափորոշչի 5-րդ գլխում:

2. Տուբերկուլոզ ախտորոշմամբ հիվանդները գրանցվում և հաշվառվում են ըստ տուբերկուլոզային պրոցեսի տեղակայման, բուժման կատեգորիայի (ըստ հավելված 17-ի)

3. Տուբերկուլոզով հիվանդների գրանցման և հաշվետվական ձևերը լրացվում են ԱՀԿ-ի կողմից նախատեսված՝ «ԴՈՏՍ» ռազմավարության պահանջներին համապատասխան գրանցման և հաշվետվական ձևերում (ըստ հավելված 18-ի):

3.1 - **Տուբերկուլոզով հիվանդի բուժման անհատական քարտ** (ձև՝ «ՏԲ 01 ») լրացվում է հիվանդի հակատուբերկուլոզային բուժումը սկսելու հետ միաժամանակ: Այս քարտը լրացվում է բուժող բժշկի կողմից, ինչպես տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետում անպես էլ՝ հակատուբերկուլոզային ստացիոնարում: Քարտի վրա նշումներ արվում են ամեն անգամ հիվանդին դեղորայք տրամադրելիս: Նշվում է X տառով , այն օրը, երբ հիվանդը ստացել է դեղորայքը բուժհաստատությունում (ՏԲ կաբինետ, ԲԳԱ, ԲՄԿ), T տառով՝ եթե հիվանդը ստացել է դեղորայքը կազմակերպված տնային այցի ժամանակ, A տառով այլ տարբերակը, նշվում է ցանկացած այլ եղանակով դեղորայքը տրամադրելու դեպքում: Գիտողությունների մեջ նշվում է ընդամենը քանի օր է տրվել դեղորայք (X+T+A= ընդամենը) և յուրաքանչյուրից առանձին-առանձին

(X, T, A) ձևով քանիսը:

Գրանցվում են նաև խորիսի «դեկրետային» ամիսների հետազոտությունների արդյունքները:

Հիվանդի տեղափոխման ժամանակ ՏԲ 01 քարտը անմիջապես փոխանցվում է այն բուժհաստատությանը, որտեղ շարունակվելու է հիվանդի հետագա բուժումն ու հսկողությունը:

Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսերի հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքից բուժումն ավարտած և դուրս գրված տուբերկուլոզով հիվանդների ՏԲ01 քարտերի և էպիկրիզների պատճենները ուղարկվում են հիվանդի բնակավայրի պոլիկլինիկայի տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ:

3.2. **Տուբերկուլոզով հիվանդի իդենտիֆիկացիոն քարտը** (ձև «ՏԲ 02») լրացվում է հիվանդի մոտ ՏԲ ախտորոշվելուց անմիջապես հետո՝ ՏԲ 01 բուժման քարտի հետ միաժամանակ և պահվում հիվանդի մոտ:

3.3. **Տարածաշրջանում տուբերկուլոզի հաշվառման մատյանում** (ձև «ՏԲ 03»), պարտադիր գրանցվում են բոլոր այն դեպքերը /առաջնակի և կրկնակի/, որոնց մոտ տարածաշրջանում տվյալ տարում հաստատվել է ակտիվ տուբերկուլոզ: Կրկնությունից խուսափելու նպատակով, ազատագրվման վայրերից վերադարձած և Հանրապետական հակատուբերկուլոզային հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունքից դուրս գրված տուբերկուլոզով հիվանդները գրանցվում են միայն «տեղափոխվածներ» սյունակում:

3.4. **Խորիսի մանրադիտակային հետազոտության լաբորատոր հաշվառման մատյան** (ձև «ՏԲ 04 ») լրացնում են խորիսի մանրադիտակային հետազոտություն իրականացնող բոլոր լաբորատորիաները: Տվյալները լրացվում են խորիսի հետազոտման ուղեգրի գրառումներից և տեղում՝ լաբորատորիայում հետազոտության արդյունքներից: Լաբորատոր հաշվառման մատյանը պարբերաբար համեմատվում է տուբերկուլոզի հաշվառման տարածաշրջանային մատյանի հետ՝ համոզվելու համար, որ ախտորոշված բոլոր դեպքերը գրանցվել են վերջինում:

3.5. Տուր. լաբորատորիայի ուղեգիրը (ձև «ՏԲ 05») լրացվում է բոլոր տուր. հաստատությունների կողմից, ուղարկվում համապատասխան բակտերիոսկոպիկ լաբորատորիա **խորխի և ցանքսի հետազոտություն անցկացնելու համար:**

3.6. Նոր դեպքերի և ռեցիդիվների վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունը (ձև «ՏԲ 07») լրացնելը պարտադիր է տուբերկուլոզի դեմ պայքարի բոլոր կաբինետների համար: Այն լրացվում է «ՏԲ 03» տուբերկուլոզի հաշվառման տարածաշրջանային մատյանից և յուրաքանչյուր եռամսյակ՝ «ՏԲ 03» հաշվառման մատյանի պատճենի հետ մեկտեղ ներկայացվում է ՀՀ ԱՆ Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ:

3.7. 12-15 ամիս առաջ հաշվառման վերցված տուբերկուլոզով հիվանդների բուժման արդյունքների վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունը (ձև «ՏԲ 08») պարտադիր է տուբերկուլոզի դեմ պայքարի բոլոր կաբինետների համար, լրացվում է Շրջանում տուբերկուլոզի հաշվառման մատյանից բոլոր այն հիվանդների համար, որոնք հաշվառման են վերցվել 12-15 ամիս առաջ և որոնց բուժումն ավարտվել է: Հաշվետվական այս ձևը յուրաքանչյուր եռամսյակ /ՏԲ 03- Շրջանում տուբերկուլոզի հաշվառման մատյանի պատճենի հետ մեկտեղ/ ներկայացվում է ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»:

3.8. Տուբերկուլոզով հիվանդի տեղափոխման ձևը՝ (ձև «ՏԲ 09») լրացվում է բոլոր այն հիվանդների համար, որոնք բուժումը շարունակելու նպատակով տեղափոխվում են մեկ այլ հակատուբերկուլոզային հաստատություն:

3.9. Խորխի մանրէազերծման վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունը՝ (ձև «ՏԲ 10») պարտադիր է տուբերկուլոզի դեմ պայքարի բոլոր կաբինետների համար, լրացվում է շրջանում տուբերկուլոզի հաշվառման մատյանում 4 ամիս առաջ ավարտված եռամսյակում գրանցված դեպքերի համար, ընդգրկվում են միայն թոքային «քսուք դրական» բոլոր դեպքերը /առաջնակի և կրկնակի/: Յուրաքանչյուր եռամսյակ Շրջանում տուբերկուլոզի հաշվառման մատյանի պատճենի հետ մեկտեղ /ՏԲ 03/- ներկայացվում է ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»:

3.10. Հակատուբերկուլոզային դեղորայքի եռամսյակային հաշվետվությունը՝ (ձև «ՏԲ 11») պարտադիր է հակատուբերկուլոզային բոլոր հաստատությունների համար և ընդգրկում է տեղեկություն՝ 1-ին շաբթի հակատուբերկուլոզային դեղորայքի եռամսյակային շարժի և տվյալ եռամսյակում հայտնաբերված հիվանդների քանակի վերաբերյալ՝ ըստ կատեգորիաների: Յուրաքանչյուր եռամսյակ հաշվետվական այս ձևը ներկայացվում է ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»:

3.11. պարտադիր լրացվում են նաև հետևյալ հաշվետվական ձևերը՝

- **Հիվանդին հակատուբերկուլոզային դեղերի բաշխման մատյան՝ (ձև «ՏԲ 12»),** պարտադիր է տուբերկուլոզի դեմ պայքարի բոլոր կաբինետների համար:
- **Բուժհաստատությունների դեղատներում դեղամիջոցների և ԲՆԱ-ի քանակական հաշվառման մատյան՝ (ձև «ՏԲ 13»),** պարտադիր է բոլոր ՏԲ բուժհաստատությունների համար: Հաշվետվության մեջ գրանցվում է նաև եռամսյակի ընթացքում դեղորայքի ընդունման օրերի ընդհանուր քանակը՝ ըստ դեղերի ընդունման տեղի (բուժհաստատություն- X, տնային այց- T, այլ տարբերակ- A), ցուցանիշը վերցվում է հիվանդների ՏԲ 01 անհատական քարտերից
- **Տարածաշրջանում լաբորատոր նյութերի/ռեակտիվների ծախսի վերաբերյալ եռամսյակային - հաշվետվությունը՝ (ձև «ՏԲ 14-Ա»),** պարտադիր է «ցանքս» կատարող լաբորատորիաների համար, (ձև «ՏԲ 14-Բ»)՝ պարտադիր է բակտերոսկոպիկ լաբորատորիաների համար: Հաշվետվական այս ձևը յուրաքանչյուր եռամսյակ ներկայացվում է ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»:
- **Կասկածելի դեպքերի հաշվառման մատյանը՝ (ձև «ՏԲ 15 »)** պարտադիր է բոլոր տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների համար: Այստեղ գրանցվում են շնչառական օրգաններին բնորոշ ախտանիշներով այն հիվանդները, որոնք դասակարգվում են որպես տուբերկուլոզի կասկածելի դեպքեր և ուղարկվում համապատասխան հետազոտությունների: Յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո ՏԱԳ է ներկայացվում տվյալ եռամսյակի ընթացքում հետազոտված կասկածելի դեպքերի և նրանցից ՏԲ ախտորոշվածների թիվը:

3.12 Հ ԱՆ ՏԱԾ-ի ԿԳ է ներկայացվում նաև տարեկան՝ թիվ 33 և թիվ 61 ք վիճակագրական ձևերը

- **Հակատուբերկուլոզային հիմնարկների հսկողության տակ գտնվող անձանց քանակակազմի վերաբերյալ տարեկան հաշվետվական ձևը՝ «Ձև թիվ 33»,** պարտադիր է տուբերկուլոզի դեմ պայքարի բոլոր կաբինետների համար, ներկայացվում է ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» յուրաքանչյուր տարվա սկզբին (ըստ նախապես որոշված ժամանակացույցի), նախորդ տարվա վերաբերյալ: Հաշվետվության մեջ ընդգրկվում են տվյալներ տվյալ հիմնարկի հսկողության տակ գտնվող անձանց ամբողջ քանակակազմի վերաբերյալ /այսինքն՝ այն անձանց և նրանց ընտանիքների, որոնց նկատմամբ բուժական հիմնարկն իրագործում է բուժ-կանխարգելիչ միջոցառումներ/:

- **Ակտիվ տուբերկուլոզով հիվանդացության վերաբերյալ տարեկան հաշվետվական ձևը՝ «Ձև թիվ 61 ք»** - պարտադիր է տուբերկուլոզի դեմ պայքարի բոլոր կաբինետների համար: Ներկայացվում է ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ»՝ թիվ 33 հաշվետվական ձևի հետ միասին:

VI I. Պետական պատվերի շրջանակներում տուբերկուլոզով հիվանդների առողջարանային վերականգնողական բուժման կազմակերպում

1. Տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետի կողմից կազմակերպվում է տուբերկուլոզով հիվանդ, կոնտակտավոր և տուբերկուլինոդիազոնոստիկայի արդյունքում հայտնաբերված վարակված երեխաների կանխարգելիչ, պահպանողական կամ վերականգնողական բուժում առողջարանային պայմաններում՝ ուղեգրերով, որոնց կցվում են շրջապատի համաճարակային իրավիճակի վերաբերյալ տեղեկանքը և էպիկրիզը / հավելված 19/: Առանձին դեպքերում առողջարանում բուժումը կազմակերպվում է տեղում լրացված ուղեգրերով՝ տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների կողմից տրված էպիկրիզների հիման վրա: Առողջարանային բուժումը կազմակերպվում է հերթափոխային եղանակով, բուժման 1 հերթափոխի տևողությունը 40 օր: Առողջարանային բուժման ավարտից հետո տարածքային տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետ ներկայացվում է էպիկրիզ /հավելված 20/ առողջարանային պայմաններում իրականացված միջոցառումների վերաբերյալ:

Յուրաքանչյուր եռամսյակ, մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, առողջարանի կողմից տուբերկուլոզի ազգային գրասենյակ է ներկայացվում հաշվետվություն՝ հաշվետու ժամանակահատվածում առողջարան ուղեգրված երեխաների թվի վերաբերյալ՝ ըստ մարզերի:

2. Տուբերկուլոզով հիվանդ մեծահասակների բուժման պահպանողական փուլի մեկ ամիսը կազմակերպվում է ՀՀ ԱՆ կողմից լիցենզավորված և լիազորված առողջարաններում /ինտենսիվ փուլը ավարտելուց հետո/, միայն գրանցման վայրի տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների կողմից տրված ուղեգրով և էպիկրիզով, որոնց կցվում են առողջարանային պայմաններում բուժումը շարունակելու համար անհրաժեշտ տվյալներ:

VIII Տուբերկուլոզի վաղ հայտնաբերման և կանխարգելման միջոցառումների կազմակերպում

Տուբերկուլոզի վաղ հայտնաբերման և կանխարգելման գործընթացը Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվում է համաձայն սույն չափորոշիչի հավելված 7-ի:

IX. Պետական պատվերի շրջանակներում տուբերկուլոզով հիվանդներին անվճար դեղորայքով ապահովման կազմակերպում

1. Տուբերկուլոզով հիվանդների բուժման համար անհրաժեշտ դեղերը (ինչպես հակատուբերկուլոզային, այնպես էլ սիմպտոմատիկ բուժման համար) տրվում են բոլոր հակատուբերկուլոզային հաստատությունների կողմից անվճար՝ համաձայն Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի «ԳՌՏՍ» ռազմավարության:

1.1 Տուբերկուլոզով հիվանդների դեղորայքային ապահովումն ու հսկողությունն իրականացվում է բժշկական հաստատության կողմից տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների և հիվանդանոցների տուբերկուլոզային բաժանմունքների մասնագետների միջոցով՝ համաձայն ՀՀ Կառավարության «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» 23.11.2006 թ-ի N 1717-Ն որոշման:

1.2 Ամբուլատոր-պոլիկլինիկական և ստացիոնար բժշկական հաստատությունները տուբերկուլոզով հիվանդների սիմպտոմատիկ բուժման համար նախատեսված դեղերի նշանակումը և բաց թողումը կազմակերպում են անվճար՝ տվյալ հաստատության ներսում:

1.3 «ԳՌՏՍ»-ով հաստատված 1-ին շարքի հակատուբերկուլոզային պրեպարատները ՀՀ են ներմուծվում համակցված հաբերի, ինչպես նաև առանձին դեղերի տեսքով:

1.4 Հայաստանի Հանրապետություն ներմուծված՝ «ԳՌՏՍ»-ով հաստատված հակատուբերկուլոզային բոլոր պրեպարատները կենտրոնացված են ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակում», որի կողմից էլ կատարվում է համապատասխան բաշխում ՀՀ մարզերի և Երևան քաղաքի տուբերկուլոզի դեմ

պայքարի բոլոր կաբինետներին և հակատուբերկուլոզային հիվանդանոցային բուժում իրականացնող տուբերկուլոզաին բաժանմունքներին:

1.4.1 հակատուբերկուլոզային հիվանդանոցների, հիվանդանոցների տուբերկուլոզային բաժանմունքներ՝ իրականացնում են բուժում միայն ինտենսիվ փուլում և ստանում են հետևյալ պրեպարատները՝ HRZE 75/150/400/275; HR 75/150; Z400; E400; S 1,0,

1.4.2 տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներն իրականացնում են բուժում ինչպես պահպանողական փուլում, այնպես էլ ինտենսիվ փուլում և ստանում են «ԴՌՏԱ»-ով հաստատված 1 –ին շաբթի հակատուբերկուլոզային բոլոր պրեպարատները,

1.4.3 տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներն իրականացնում են ՏԲ հիվանդների հետ շփման մեջ գտնվող /կոնտակտավոր /մինչև 15 տարեկան երեխաների կանխարգելիչ բուժում H100 -ով կամ H300 –ով:

2. Հակատուբերկուլոզային դեղորայքի կառավարումն իրականացվում է ՀՀ ԱՆ 03.12.2001 թ-ի N 889 հրամանով սահմանված «Բժշկական հաստատությունների դեղերի և բժշկական նշանակության այլ ապրանքների ստացման, պահպանման, հաշվառման և բաշխման կարգի» համաձայն:

3. Հիվանդների համար անհրաժեշտ քանակությամբ դեղորայքը տրամադրվում է ՀՀ ԱՆ Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակից՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը ներկայացնելով տնօրենի կնիքով հաստատված հետևյալ փաստաթղթերը

3.1 դեղորայքի շարժի եռամսյակային հաշվետվություն «ՏԲ 11»

Հաշվետվության մեջ պարտադիր նշվում է՝

- տվյալ եռամսյակի ընթացքում հայտնաբերված հիվանդների քանակը՝ ըստ առանձին կատեգորիաների,
- յուրաքանչյուր դեղի մնացորդը տվյալ եռամսյակի սկզբում, մուտքը եռամսյակի ընթացքում /եթե եղել է /, ընդհանուր ծախսը եռամսյակի ընթացքում և մնացորդը հաշվետու եռամսյակի վերջում;

3.2 1-ին շաբթի հակատուբերկուլոզային դեղորայքի պահանջագիր՝ ըստ հավելված 21-ի:

Ըստ ներկայացված եռամսյակային հաշվետվության և պահանջագրի, ՏԱԳ-ի գրասենյակում կատարվում է հաշվարկ և դուրս է գրվում հաշիվ-ապրանքագիր՝ ճշտված քանակներով:

3.3 ստացիոնար տուբերկուլոզային բուժհաստատությունները բուժհաստատության կողմից եռամսյակի ընթացքում սեփական միջոցների և այլ աղբյուրների հաշվին ձեռք բերված դեղորայքի անվանացանկը՝ համաձայն հավելված 22-ի, նշելով դեղորայքի անվանումները և քանակները՝ բացառությամբ «ՏԱԳ»-ից, կենտրոնացված կարգով, ստացված հակատուբերկուլոզային դեղորայքի:

4. Փաստաթղթերը ներկայացվում են տվյալ բուժհաստատության հակատուբերկուլոզային ծառայության մասնագետների միջոցով: Ներկայացված եռամսյակային հաշվետվության հիման վրա, Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակի դեղերի պլանավորման և պահանջարկի համակարգման ծառայության մասնագետի կողմից կատարվում է հաշվարկ և հատկացվում է անհրաժեշտ քանակով դեղամիջոցները ըստ DOTS ռազմավարական ծրագրով հաստատված ստանդարտ սխեմաների՝ ներառյալ 50 % պահեստային պաշարը:

5. Բուժհաստատությունում դեղորայքի քանակական հաշվառման մատյանում մուտքագրվում է Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակից ստացված դեղորայքի քանակը՝ ըստ հաշիվ - ապրանքագրի, ընդ որում՝

- հիվանդի կողմից դեղորայքի ընդունումը վերահսկելի դարձնելու և պոլիկլինիկայի մյուս հիվանդների և բուժանձնակազմի հետ շփումը նվազեցնելու համար, հակատուբերկուլոզային դեղորայքը պահվում և բաշխվում է անմիջապես տուբ.կաբինետում: Ստացիոնար բաժանմունքում դեղորայքը գտնվում է ավագ բուժքրոջ պատասխանատվության տակ;
- կաբինետում առկա դեղորայքից առաջնահերթ բաշխվում են այն դեղերը, որոնց պահպանման ժամկետները ավելի մոտ են ավարտին,

6. Հակատուբերկուլոզային դեղերի շարժն արտացոլվում է «Հիվանդի ՏԲ դեղերի բաշխման մատյան»-ում /ձև «ՏԲ 12»/, որտեղ՝

- յուրաքանչյուր հիվանդին հատկացվում է անհատական էջեր, որտեղ գրանցվում է հիվանդի հաճախումների ամսաթիվը՝ հերթական դեղաչափը ստանալու համար:
- դեղորայքը ստանալուց հիվանդը ստորագրում է իր ստացած դեղորայքի համար և ֆթիզիատորի կողմից տեղեկացվում է հաջորդ այցելության օրվա մասին:
- «Հիվանդի ՏԲ դեղերի բաշխման մատյան»-ի հիման վրա ամեն օրվա վերջում պարտադիր լրացվում է «ՏԱԾ –ի դեղամիջոցների քանակական հաշվառման մատյան»-ը /«ՏԲ 13»/, նշելով յուրաքանչյուր դեղի շարժը (մուտք, ելք, մնացորդ):
- տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետները և հիվանդանոցների տուբերկուլոզային բաժանմունքները Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակին տեղեկացնում են դեղորայքի պիտանելիության ժամկետի ավարտից 6 ամիս առաջ /եթե այդ 6 ամսվա ընթացքում ի

վիճակի չեն իրացնել այն/, որպեսզի անհրաժեշտության դեպքում կատարվի տվյալ դեղորայքի վերաբաշխում ներմարզային կամ միջմարզային մակարդակով՝ «Տուբերկուլոզի դեմ պայքարի գրասենյակի» միջնորդությամբ:

7. Գեղորայքակալուն տուբերկուլոզով հիվանդների բուժման ընթացքում, բժշկական ցուցումների առկայության դեպքում, կողմնակի երևույթները վերացնելու համար օգտագործվող դեղերը հատկացվում են բուժհաստատության կողմից՝ բացառությամբ կենտրոնացված կերպով ստացված դեղորայքից:

8. Բուժհաստատության տնօրենը պատասխանատվություն է կրում հակատուբերկուլոզային դեղորայքի պահպանման, հատկացման և բացառապես հակատուբերկուլոզային նպատակներով օգտագործման համար:

X Պետական պատվերի շրջանակներում ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններում լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների կազմակերպում

Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություններում պետության կողմից երաշխավորված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններն իրականացվում են տվյալ ծառայության համար նախատեսված ֆինանսավորման հաշվին:

1. Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություններում պետության կողմից երաշխավորված լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները տուբերկուլոզի հայտնաբերման նպատակով (խորխի եռակի մանրադիտակային, ռենտգեն հետազոտություն) իրականացվում են համաձայն տվյալ ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությանը լիցենզավորմամբ արտոնված լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների, իսկ ծավալները որոշվում են ըստ բժշկական ցուցումների՝ տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների մասնագետների հիմնավորված նշանակմամբ:

Տարածքային ՏԲ դեմ պայքարի կաբինետ ուղեգրված թոքային ՏԲ կասկածով բոլոր հիվանդները /նույնիսկ ռենտգենոլոգիական փոփոխությունների բացակայության դեպքում/ ենթարկվում են խորխի տարբեր նմուշների եռակի մանրադիտակային հետազոտության՝ թթվակայուն միկոբակտերիաներ հայտնաբերելու նպատակով: Տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներին կից գործում են խորխի հավաքման կետեր, որտեղ ՏԲ կաբինետի բուժքրոջ կողմից, կլինիկական հետազոտման 2 օրվա ընթացքում, հավաքում են խորխի երեք նմուշ/ ըստ հավելված 23-ի/; որտեղից, պահպանելով «ԴՌՏՍ» ռազմավարությամբ նախատեսված խորխի հավաքման և տեղափոխման պահանջները, ՀՀ ԱՆ ՏԱԾ-ի շրջանակներում տրամադրած մեքենաներով, հակաարտահոսքային կոնտեյներներով և տեղափոխման հատուկ արկղերով նմուշները սահմանված պարբերաբարականությամբ տեղափոխվում են խորխի մանրադիտակային հետազոտություն իրականացնող լաբորատորիաներ, այնուհետև ԱՌԼ՝ ցանքս և ԴՋԹ՝ իրականացնելու /ըստ հավելված 24-ի/: Հավաքման օրվանից մինչև ԱՌԼ տեղափոխումը չպետք է գերազանցի **4 օրը** : **Ցանքս և ԴՋԹ կատարելու համար ԱՌԼ է ուղարկվում տուբերկուլոզի հաստատված ախտորոշումով հիվանդների խորխի նմուշները:**

Մանրադիտակային հետազոտություն իրականացնող լաբորատորիաների գործառնությունները ներկայացված են հավելված 29-ում:

ՏԱԾ մարզային համակարգողները ընթացիկ տարվա համար նախապես մշակում են մարզում խորխի հավաքման կետերից մարզային լաբորատորիա, մարզային լաբորատորիայից ԱՌԼ խորխի տեղափոխման, ինչպես նաև հետազոտման արդյունքների հետադարձ տեղափոխման /լաբորատորիաներից ՏԲ կաբինետներ/ հստակ ժամանակացույց, որը հաստատվում է «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակի» կողմից:

Երևան քաղաքում՝ լաբորատոր մանրադիտակային հետազոտությունները կազմակերպում են «Երևան քաղաքի հակատուբերկուլոզային դիսպանսեր» ԱՊՓԲԸ-ի լաբորատորիայում /բացառությամբ «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպության «Տուբերկուլոզի դեղորայքակալուն ձևերի բացահայտում, ախտորոշում և բուժում » փորձարարական ծրագրի իրականացման տարածքների բազմադեղորայքակալուն հիվանդների մանրադիտակային հետազոտությունների / : Երևան քաղաքի բոլոր տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետներին կից գործում են խորխի հավաքման կետեր, որտեղից՝ պահպանելով «ԴՌՏՍ» ռազմավարությամբ նախատեսված խորխի հավաքման և տեղափոխման պահանջները նմուշները տեղափոխվում են ՔՀՏԳ: ՔՀՏԳ-ն ընթացիկ տարվա համար նախապես մշակում է Երևան քաղաքի ՏԲ կաբինետներին կից խորխի հավաքման կետերից ՔՀՏԳ, այնուհետև ԱՌԼ խորխի տեղափոխման և հետազոտման արդյունքների հետադարձ տեղափոխման /լաբորատորիաներից ՏԲ կաբինետներ/ հստակ ժամանակացույց, որը հաստատվում է Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակի կողմից:

Թոքային տուբերկուլոզ ախտորոշված հիվանդների խորխի մանրադիտակային հետազոտությունները կազմակերպվում են համաձայն «ԴՌՏՍ» ռազմավարության սխեմաների.

- առաջնակի մանրէագատող հիվանդների խորխի հետազոտության կազմակերպում` ինտենսիվ բուժման երկրորդ ամսվա վերջում, դրական խորխի պահպանման դեպքում նաև` երրորդ ամսվա վերջում, այնուհետև` հինգերորդ և վեցերորդ ամիսների վերջում;
- առաջնակի ոչ մանրէագատող հիվանդների խորխի հետազոտության կազմակերպում` ինտենսիվ բուժման երկրորդ ամսվա վերջում
- կրկնակի մանրէագատող հիվանդների խորխի հետազոտության կազմակերպում` ինտենսիվ բուժման երրորդ ամսվա վերջում /դրական խորխի դեպքում նաև չորրորդ ամսվա վերջում/ այնուհետև հինգերորդ և ութերորդ ամիսների վերջում;
- կրկնակի ոչ մանրէագատող հիվանդների խորխի հետազոտության կազմակերպում` ինտենսիվ բուժման երրորդ ամսվա վերջում

Ստացիոնար բուժում ստացող հիվանդների խորխի մանրադիտակային հետազոտությունը ևս իրականացվում է տվյալ բուժհաստատության լաբորատորիայում:

Բոլոր հիվանդների խորխի մանրէաբանական և դեղագալստության որոշման վերաբերյալ հետազոտությունները կազմակերպվում են Ազգային ռեֆերենս լաբորատորիայում` համաձայն «ԴՌՏՍ» ռազմավարության սխեմաների:

Ազգային ռեֆերենս լաբորատորիայում մարզերից տեղափոխված խորխի նմուշների ընդունման և սահմանված ժամկետներում հետազոտությունների իրականացման նպատակով շաբաթ օրերին սահմանվում են հերթապահության սկզբունքով աշխատանքային օրեր:

ԱՌԼ-ն յուրաքանչյուր ամիս «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» է ներկայացնում ԱՌԼ-ի լաբորատոր հետազոտությունների տվյալների համակարգչային բազան` համարված նախորդ ամսվա ընթացքում իրականացված հետազոտությունների տվյալներով: ԱՌԼ-ն հանրապետական և մարզային կտրվածքով մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» է ներկայացնում տվյալ եռամսյակի ընթացքում կատարված հետազոտությունների վերաբերյալ հաշվետվություն:

ՀՀ մարզերում և Երևանի ԲՀՏԳ-ի խորխի մանրադիտակային հետազոտություն իրականացնող լաբորատորիաների արտաքին որակի հսկողությունն իրականացվում է ԱՌԼ-ի կողմից:

Երևան քաղաքում խորխի մանրադիտակային հետազոտություն իրականացնող լաբորատորիաների արտաքին որակի հսկողությունն իրականացվում է ԲՀՏԳ-ի կողմից:

2. Բուժհաստատության կազմում գործող խորխի մանրադիտակային հետազոտություն իրականացնող լաբորատորիաները մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» են ներկայացնում տվյալ եռամսյակի ընթացքում կատարված հետազոտությունների`/հավելված 27/, լաբորատոր ծախսանյութերի շարժի /հավելված 25 / վերաբերյալ հաշվետվություններ:

Լաբորատոր ծախսանյութեր ստանալու համար ներկայացվում է պահանջագիր`/հավելված 30/ :

3. Տուբերկուլոզը հաստատելու համար, հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների անհրաժեշտության դեպքում /արտաքին շնչառական ֆունկցիայի որոշում, բրոնխոսկոպիա, կոմպյուտերային տոմոգրաֆիա և այլն / հիվանդները տուբերկուլոզի դեմ պայքարի կաբինետների մասնագետների կողմից ուղեգրվում են համաձայն ՀՀ ԱՆ հրամանով հաստատված «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների» չափորոշիչի:

4. Նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց համար` 10.07.2008 թ-ի «Նախագորակոչային ու գորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների առողջական վիճակի գնահատման, բժշկական փորձաքննության անցկացման և բժշկական օգնության ու սպասարկման կարգը հաստատելու մասին» N 748-Ն կառավարության որոշմամբ հաստատված ծավալների:

XI. Պետական պատվերի շրջանակներում ախտաբանաանատոմիական հետազոտությունների կազմակերպում

Տուբերկուլոզի ծառայության մեջ մահացած հիվանդների ախտաբանաանատոմիական հետազոտությունները կազմակերպվում են ըստ ՀՀ ԱՆ հրամանով հաստատած «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ախտաբանաանատոմիական հետազոտությունների կազմակերպում» չափորոշիչի

XII .Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի կառավարում, ղեկավարում, համակարգում

Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի կառավարումը, ղեկավարումը և համակարգումը իրականացվում է ՀՀ ԱՆ «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ կողմից մարզային համակարգողների միջոցով

«Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ

- ՀՀ տարածքում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրից բխող տուբերկուլոզի դեմ պայքարին ուղղված միջոցառումների իրականացման համակարգում, կազմակերպում և դիտարկում
- եռամսյակային ու տարեկան տվյալների հավաքագրում և ամփոփում
- ՀՀ բնակչության (երեխաների և մեծերի) շրջանում տուբերկուլոզով հիվանդների կանխարգելման, հայտնաբերման, բուժօգնության ցուցաբերման աշխատանքների շարունակական համակարգում
- իրավիճակի գնահատում՝ տվյալների հիման վրա
- եռամսյակային մշտադիտարկումների կազմակերպում
- մշտադիտարկումների արդյունքում մոնիտորինգի արձանագրությունների կազմում
- արձանագրված թերությունների և առաջարկների ամփոփ ներկայացում ՀՀ ԱՆ
- ՏԱԾ-ի շրջանակներում հակատուբերկուլոզային ղեղամիջոցների և լաբորատոր ծախսանյութերի պահանջարկի գնահատում
- ՏԱԾ-ի շրջանակներում ձեռք բերված հակատուբերկուլոզային ղեղամիջոցների և լաբորատոր ծախսանյութերի բաշխման գործընթացի ապահովում
- հակատուբերկուլոզային ծառայության և ընդհանուր բուժական ցանցի բուժաշխատողների համար ուսուցողական ծրագրերի մշակում, դասընթացների կազմակերպում, կազմակերպա-մեթոդական օգնության իրականացում
- տուբերկուլոզի ծառայության ոլորտում առողջապահության կազմակերպման, կառավարման, ֆինանսավորման, տնտեսավարման ժամանակակից մոդելների, նորմատիվների և բժշկական ստանդարտների մշակում
- հանրային առողջության պահպանման նպատակով, բնակչությանը առողջ վարքագծի և տուբերկուլոզի վերաբերյալ իրազեկելու նպատակով կանխարգելիչ և ուսուցողական գործունեության կազմակերպում (այդ թվում բրոշյուրների և այլ հաղորդակցական նյութերի տպագրում, տարածում), տուբերկուլոզի ոլորտում պարբերական մամուլի հրատարակում
- հաշվառման, հաշվետվական, բուժօգնության կազմակերպման և սպասարկման ձևերի մշակում
- այլ գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ տուբերկուլոզի ոլորտում աշխատանքների համակարգում
- գիտաբժշկական, փորձարարական հետազոտությունների իրականացում

ՏԱԾ-ի մարզային համակարգողներ՝

- մշակված ռազմավարական ուղղությունների տեղայնացում
- մարզային մակարդակով միջոցառումների պլանավորում և մոնիտորինգ
- ներմարզային այլ գերատեսչությունների հետ աշխատանքների համակարգում
- ներմարզային մակարդակում կադրերով ապահովման գործընթացի կազմակերպում
- մարզում ՏԲ հիվանդների ղեղամիջոցների ընդունման ուղղակիորեն հսկման /DOT/ իրականացման ապահովում
- ՏԱԾ -ի շրջանակներում տրամադրված լաբորատոր սարքավորումների, ծախսանյութերի և դեղերի բաշխման կազմակերպում
- հսկողության իրականացում հայտնաբերված բոլոր հիվանդների հաշվառման և «ԳՈՏԱ» ռազմավարությամբ բուժման կազմակերպմանը

- մարզային ենթակայության տուր հաստատություններից հաշվետվությունների հավաքագրման և ներկայացման կազմակերպում
- խորհրդի լաբորատոր հետազոտության և հետազոտության արդյունքների տեղափոխման կազմակերպում՝ ըստ նախապես մշակված և Տուրերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակի կողմից հաստատված ժամանակացույցի
- «Տուրերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակի», մարզային մշտադիտարկում իրականացնող խմբի հետ համատեղ տուր.հաստատությունների մոնիտորինգի և վերահսկման իրականացում
- հանրային առողջության պահպանման և բնակչությանը տուրերկուլոզի վերաբերյալ իրազեկելու նպատակով՝ անհրաժեշտ տեղեկատվության ապահովում:

ՏԱԾ-ի մարզային համակարգողներին կից մշտապես գործում է ներմարզային մոնիտորինգ իրականացնող խումբ, հետևյալ կազմով՝

1. ֆիզիատոր
2. լաբորատոր մասնագետ
3. դեղագետ

- մարզային մակարդակով եռամսյակային մշտադիտարկման իրականացում, արդյունքներից ելնելով մշտադիտարկման ձևերի լրացում, արձանագրությունների կազմում, արձանագրված թերությունների և առաջարկների ամփոփ ներկայացում «Տուրերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ

XIII. Տուրերկուլոզային Ծառայության ֆինանսավորում

Տուրերկուլոզային ծառայության Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի բոլոր մակարդակներում անվճար է: Ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ բյուջեյի մասին օրենքով: Պոլիկլինիկաների տուրերկուլոզի դեմ պայքարի կաբինետների բժիշկների և միջին բուժանձնակազմի վարձատրումն իրականացվում է ըստ ՀՀ ԱՆ հրամանով հաստատած «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից բժիշկների և միջին բուժանձնակազմի վարձատրման համար սահմանված հաշվարկային միավորների, ինչպես նաև սպասարկվող բնակչության առավելագույն թիվը գերազանցող դեպքերում տեղամասային բժիշկների գործունեության համար տրվող ժամանակավոր թույլտվության և վարձատրման» չափորոշչի, իսկ հիվանդանոցների ֆինանսավորումն իրականացվում է բուժված հիվանդների փոխհատուցմամբ ըստ ՀՀ ԱՆ և հակատուրերկուլոզային բուժ.հաստատությունների միջև կնքված պայմանագրի՝ համաձայն ՀՀ ԱՆ հրամանով հաստատած «Բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման նորմատիվների և միջինացված գների» :

ՀՀ ԱՆ բժշկական օգնության կազմակերպման վարչության պետ՝

Վ. Պողոսյան

Նշումներ , դիտողություններ և առաջարկներ

Նշումներ , դիտողություններ և առաջարկներ